## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 հոկտեմբերի 2025 թվականի N 611-Ա

## <<ԻՄԻՋ Մ. Գ. >> ՍՊԸ-ԻՆ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> ՀՀ օրենքի և Վարդենիս համայնքի ավագանու 24.01.2025 թվականի N 2-Ն որոշման դրույթներով և հիմք ընդունելով <<ԻՄԻՋ Մ . Գ . >> ՍՊԸ-Ի տնօրեն Աշոտ Կարապետյանի 01/10/2025 թվականի դիմում-հայտը որոշում եմ՝

1.Թույլատրել <<ԻՄԻՋ Մ . Գ .>> ՍՊԸ-ին Վարդենիս քաղաքի Երևանյան փողոցի 1/2 հասցեում, հանրախանութի մոտ գտնվող գովազդային վահանակի վրա Բ կողմում 18 քմ մակերեսով տեղադրված գովազդի ժամկետը երկարաձգել՝ մինչև 31/10/2025 թվականը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2025թ. հոկտեմբերի 06
ք. Վարդենիս

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 հոկտեմբերի 2025 թվականի N 612-Ա

## ՆԱՐԻՆԵ ԱԼԲԵՐՏԻ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ <<ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 2 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի, ՀՀ <<Աշխատանքային օրենսգրքի>> 94-րդ հոդվածի 2-րդ կետի, 95-րդ հոդվածի 2-րդ կետի, 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02-Ն հրամանով հաստատված կարգի 72-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի թիվ 2 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 03 հոկտեմբերի 2025թ . -ի <<Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչելու մասին>> թիվ 3 որոշումը և Նարինե Ալբերտի Մինասյանի անձնական դիմումը՝ **որոշում եմ.**

1.2025 թվականի հոկտեմբերի 06-ից Նարինե Ալբերտի Մինասյանին նշանակել <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի թիվ 2 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում և նրա հետ կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր մինչև 14. 07.2030 թվականը:

2.Աշխատավարձը՝ համաձայն սահմանված պաշտոնային դրույքաչափի (1 հաստիքային միավոր):

3. Լուծել Նարինե Ալբերտի Մինասյանի հետ 15.08.2025 թվականին կնքված ժամկետային աշխատանքային պայմանագիրը:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2025թ. հոկտեմբերի 06
ք. Վարդենիս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հոկտեմբերի 2025 թվականի N 613-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻՆ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԾՈՎԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՈՌՈԳՄԱՆ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑԵՐԻ ԵՎ ՍԵԼԱՖԱՏԱՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ 20/08/2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ ՇԹ/58/12334-25 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 6-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 19 մարտ 2015 թվականի N 596 որոշմամբ հաստատված կարգը և <<ՇԻՆ ԳՐԻԳ>> ՍՊԸ տնօրենի Գ. Գրիգորյանի 03.10.2025 թվականի N11 գրությունը՝ որոշում եմ.

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքապետարանին Վարդենիս համայնքի Ծովակ բնակավայրի ոռոգման ներքին ցանցի և սելֆատարի կառուցման աշխատանքներին տրված 20.08.2025 թվականի թիվ ՇԹ/58/12334-25 շինարարության թույլտվության ժամկետը երկարաձգել 3 ամսով մինչև 03.01.2026 թվականը՝ ավարտական ակտ ստանալու համար:

Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման և հողաշինության բաժնի վրա:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2025թ. հոկտեմբերի 07
ք. Վարդենիս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 հոկտեմբերի 2025 թվականի N 614-Ա

## ԿԱՄՈ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ 02.07.2025Թ. ՏՐՎԱԾ ԹԻՎ ՇԹ/56/9712-25 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 6-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 19 մարտ 2015 թվականի N 596 որոշմամբ հաստատված կարգը և հիմք ընդունելով Կամո Ղազարյանի դիմումը ՝ որոշում եմ.

1. Կամո Ղազարյանին Վարդենիս քաղաքի (ծածկագիր 05-005-0239-0028), նոր կառուցվող ավտոտնակին տրված՝ 02.07.2025 թվականի թիվ ՇԹ/56/9712-25 շինարարության թույլատվության ժամկետը երկարացնել 3 ամսով՝ ավարտական ակտ ստանալու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ — ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 07
ք. Վարդենիս

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հոկտեմբերի 2025 թվականի N 615-Ա

## ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵԾ ՄԱՍՐԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 05-065-0018-0010 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005 թվականի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգով, հիմք ընդունելով Գրիգորի Գաբրիելյանի դիմումը որոշում եմ՝

1.Վարդենիս համայնքի Մեծ Մասրիկ բնակավայրի 6-րդ փողոցի 8-րդ նրբանցքի՝ 05-065-0018-0010 ծածկագրով անշարժ գույքին տրամադրել՝ Մեծ Մասրիկ բնակավայրի 6-րդ փողոց 8-րդ նրբանցք 4 հողամաս հասցե:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2025թ. հոկտեմբերի 07
ք. Վարդենիս

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հոկտեմբերի 2025 թվականի N 616-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻՆ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՋՐԱԳԾԵՐԻ ԽՐԱՄՈՒՂԻՆԵՐԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ 04/09/2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ ԾԹ/56/13367-25 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Յայաստանի Յանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 6-րդ կետով, հիմք ընդունելով Յայաստանի Յանրապետության կառավարության 19 մարտ 2015 թվականի N 596 որոշմամբ հաստատված կարգը և <<ԿԱՊԱՎՈՐ>> ՍՊԸ տնօրենի Գ. Չիլինգարյանի 03.10.2025 թվականի գրությունը՝ որոշում եմ.

Յայաստանի Յանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքապետարանին Վարդենիս քաղաքի Վ.Յամբարձումյան փողոցի ջրագծերի խրամուղիների ասֆալտապատման աշխատանքների համար տրված 04/09/2025 թվականի թիվ ԾԹ/56/13367-25 շինարարության թույլտվության ժամկետը երկարաձգել 3 ամսով՝ մինչև 03.01.2026 թվականը՝ ավարտական ակտ ստանալու համար:

Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման և հողաշինության բաժնի վրա:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2025թ. հոկտեմբերի 07
ք. Վարդենիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հոկտեմբերի 2025 թվականի N 617-Ա

## ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵԳՈՒՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 05-015-0019-0014 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005 թվականի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգով, հիմք ընդունելով Սիրանուշ Մարտիրոսյանի դիմումը որոշում եմ՝

1.Վարդենիս համայնքի Արեգունի բնակավայրի 5-րդ փողոցի՝ 05-015-0019-0014 ծածկագրով անշարժ գույքին տրամադրել՝ Արեգունի բնակավայր 5-րդ փողոց 18/1 դպրոց:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 07
ք. Վարդենիս

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

08 հոկտեմբերի 2025 թվականի N 618-Ա

**ՄԱՔՍԻՄ ՍՈԿՐԱՏԻ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՐԵՏՈՒՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ՀՀ <<Աշխատանքային օրենսգրքի>> 14-րդ հոդվածի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի դրույթներով՝ **որոշում եմ.**

1.2025 թվականի հոկտեմբերի 08-ից Մաքսիմ Սոկրատի Գալստյանի նշանակել Վարդենիս համայնքի Տրետուք բնակավայրի վարչական ղեկավարի պաշտոնում:

2.Աշխատանքային պարտականությունները ստանձնել սույն թվականի հոկտեմբերի 08-ից:

3.Աշխատավարձը համաձայն սահմանված դրույքաչափի:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2025թ. հոկտեմբերի 08
ք. Վարդենիս

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
## ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 հոկտեմբերի 2025 թվականի N 619-Ա

### ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 05-005-0238-0093 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ՝ ԳԱՅԻ ՓՈՂՈՑ 80 ՀԱՍՑԵԻ 0.19694ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ Ի ԴԵՄՍ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019 թվականի մայիսի 07-ի N 39-Ա որոշումը՝ որոշում եմ.

1.Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող Վարդենիս քաղաքի Գայի փողոց 80 հասցեի 05-005-0238-0093 ծածկագրով 0,19694 հա հողամասը (սեփականության իրավունքի վկայական N 01082025-05-0037)
նվիրել՝ Հայաստանի Հանրապետության կառավարության՝ ի դեմս պաշտպանության նախարարության ՀՀ կառավարության 2025 թվականի հոկտեմբերի 2-ի <<ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> թիվ 1409-Ա որոշման համաձայն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2025թ. հոկտեմբերի 10
ք. Վարդենիս